ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺ Է, ՄԵՐ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԵՎ՝ ԱՀԱՋԱՆԳՈՂ

Այդ իսկ պատճառով չարժե ո՛չ զարմանալ, ո՛չ էլ մանավանդ սրտնեղել, որ երեկ արդեն ելույթ ունեցողները բավական կծու բնորոշումներով էին արտահայտվում երկրի ղեկավարների մասին: Առանձին դեպքերում ելույթները քաղաքական երանգ էին ստանում, հնչում էին հրաժարականի պահանջներ:

Նույնիսկ առաջարկվեց դիմել Եվրոպայի խորհուրդ, որ Հայաստանին լիիրավ անդամ չընդունի, մինչեւ... գիտնականների աշխատավարձերը չվճարվեն: Առաջարկողը երեւի տեղյակ չէր, որ երկու օր է, ինչ Հայաստանը ԵԽ անդամ է:

Դահլիճը շատ ավելի աշխույժ արձագանքեց հայրենի կառավարությանը՝ ֆիննախարարությունով հանդերձ դատի տալու առաջարկությանը: Ընդ որում, ձեւակերպումն էլ ինքնատիպ էր. *«Կառավարությունից գանձվի ոչ միայն շուրջ 300 մլն դրամ կազմող աշխատավարձային ընդհանուր պարտքը, այլեւ տույժ՝ 0,5 տոկոս դրույքաչափով, յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար»:*

Առաջարկ եղավ նաեւ ներել հոսանքի, ջրի, հեռախոսի վարձավճարների կուտակված պարտքերը կամ կառավարությունը թող *«մի գրպանից մյուս գրպանին փոխանցի այդ գումարները»:*

Կոչ արվեց նաեւ Հայաստանի գիտության փրկության կոմիտե ստեղծել: Ելույթ ունեցողներից շատերը հիշեցրին, որ գիտությունը ուժ է: Իսկ միավորվելու, համախմբվելու դեպքում, այն կարող է զորեղ, ծանրակշիռ ուժ դառնալ:

Գիտնականների բողոքի ժողովն ավարտվեց առանց որոշում կայացնելու: Այդ բեռն իր ուսերին վերցրեց միացյալ արհկոմը՝ վստահեցնելով, որ բոլոր առաջարկություններն իմի բերելուց հետո որոշում կընդունի, եւ դրա մասին բոլորը կտեղեկացվեն:

Անկեղծ ասած, թե ի՞նչ կորոշի ԳԱԱ միացյալ արհկոմը, այնքան էլ կարեւոր չէ: Շատ ավելի էական է երեկվա բողոքի ցույցի բուն փաստը, որն արդեն հայրենի գիտական աշխարհի ներկայացուցիչների երկրորդ լուրջ ահազանգն է:

Սպասենք «երրո՞րդ զանգին», թե՞ իշխանությունները դուրս կգան, գիտնականներից մեկի բնորոշմամբ, «չեմ տեսնում, չեմ լսում, չեմ խոսում»-ի վիճակից: Կսթափվե՞ն, կգիտակցե՞ն, որ գիտության նկատմամբ քամահրալից վերաբերմունքը տասնապատիկ թանկ է նստելու ոչ միայն իրենց, այլեւ ազգի եւ պետության վրա:

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ